ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Մ. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան.

Ի պատասխան Ձեր 10.12.2019թ. հ.01/487 գրության՝ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Ս. Էյրամջյանին՝ քաղաքացի Ն. Քելեշեանի կողմից հասցեագրված դիմումի վերաբերյալ, տեղեկացվում է, որ դիմումը քննարկվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ում՝ ներհամայնքային միկրոավտոբուսային հ.34 երթուղին սպասարկող ընկերության տնօրինության հետ՝ նշված միկրոավտոբուսի վարորդի մասնակցությամբ: Քննարկման արդյունքում վարորդը խստորեն զգուշացվել է՝ նմանատիպ դեպքերը բացառելու և ուղևորների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ընկերության ղեկավարությանը հանձնարարվել է վարորդների հետ պարբերաբար իրականացնել բացատրական աշխատանքներ՝ ուղևորների հանդեպ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու և վերջիններիս բարեկիրթ և անվտանգ սպասարկումն ապահովելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ